ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

29 մայիսի 2012թ. № 34-Ա

<<ԴԻՑՄԱՅՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի օգոստոսի 25-ի <<Դիցմայրի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարելու մասին>> N1276-Ա որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի և կազմակերպության լուծարային հանձնաժողովի նախագահի 2012 թվականի մայիսի 18-ի N14/3495-12 գրավոր առաջարկության **կարգադրում եմ.**

1. <<Դիցմայրի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարային հանձնաժողովի գույքագրման արդյունքներով հաշվառված գույքը օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնել <<Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին:
2. Գույքի հանձնման-ընդունման աշխատանքները ապահովելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

   Աշոտ Խաչատրյան – մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ

   Կառլեն Կոզմանով- մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ.

   Մելանյա Հայրապետյան - ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ:
3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. մայիսի 29
ք. Կապան